

GRZEGORZ PELCZYNSKI, *Ormianie Polscy w XX wieku*, Warszawa, 1997, 180 str. ԳԺԵԳՈՒԺ ՊԵԼՉՈՒՆՍԿԻ-ԼԵԽԱԽԱՅԵՐԸ XX դարում

Ընդհանրապես լեհ պատմագիտությունը XX դարի լեհահայոց պատմությանը անդրադարձել է նրանց եկեղեցու պատմությունը շարադրելու առիթներով: Նշված շրջանի լեհահայոց ամբողջական պատմությունը նվիրված տպագիր աշխատություններ չեն եղել՝ թեև գաղութի 1900-1997 թթ. պատմության առանձին շրջանների, բնագավառների ու հարցերի վերաբերյալ հրատարակվել են բազմաթիվ արժեքավոր գրքեր, գրքուկներ, ծանուցարաններ (բուկլետ), ուսումնասիրություններ, հոդվածներ:

Հայ պատմագիտության մեջ նման փորձ էր տողերիս հեղինակի «Ուրվագծեր XX դարի լեհահայոց գաղութի պատմության» ընդարձակ հոդվածը՝ («Հանդես ամսօրյա», 1981), որը իրեն հավելված գետեղված է նաև մեր «Սաղոկ Բարոնը՝ լեհահայոց պատմության ուսումնասիրող» մենագրությունում (Երևան, 1998 թ.): Հայ գիտնականներից նշված շրջանի լեհահայոց պատմությանը անդրադարձել է նաև Բ. Բարսեղյանը՝ իր «Լեհահայության մշակութային կյանքը և գրականությունը» արժեքավոր աշխատության մեջ (1992 թ.): Բայց հիշատակված աշխատությունները հեռու են ամբողջական լինելուց: Եվ ահա բացը լրացնում է 36-ամյա լեհ գիտնական Գժեգոժ Պելչինսկու վարչավայրում լույս տեսած «Լեհահայերը XX դարում» մենագրությունը:

Ուսումնասիրության մեջ առաջին անգամ տրված է լեհահայոց 1900-1996 թթ. պատմությունը, որին նախորդում է գաղութի XIX դարի պատմության հակիրճ անդրադարձը:

Խոսելով XIX դ. լեհահայոց գաղութի մասին, հեղինակը նշում է, որ լեհահայերի թիվը 5 - 6 հազարից չի անցել, ունեցել են երեք թեմ՝ Լվովում, Ստանիսլավովում և Հայերի Հիմնած Կուտի գյուղում: Լվովի թեմի մեջ մտել են Լվովի և Բերեժանի, Սնյատինի թեմի մեջ՝ Ստանիսլավի, Տիսմենիցի և Լիսիցեի, Կուտի թեմի մեջ՝ Կուտի,

Հորոգենկայի, ինչպես նաև Բուքովինայի Չերնովեց և Սուչավա քաղաքների ու շրջակայքի հայերը: Նշված բոլոր բնակավայրերում հայերն ունեցել են եկեղեցիներ: Լեհահայոց եկեղեցու գլուխ արքեպիսկոպոսի նստավայրը Լվովն էր:

Լեհաստանի վերջին բաժանումից (1795) ու հատկապես Ռուսաստանի կազմում «Լեհական թագավորություն» վարչական իրավազուրկ միավորի ստեղծումից (1815) հետո Ռուսաստանին անցած լեհական բնակավայրերի (Մոգիլյով, Կամենեց-Պոդոլսկ, Լուցկ, Ռաշքով, Բալտա և այլք) հայերը շատ արագ կորցրեցին իրենց ինքնուրույնությունը և ձուլվեցին: Լվովում նստող լեհահայոց արքեպիսկոպոսի իշխանությունը այլևս չէր տարածվում Ռուսաստանին անցած տարածքների լեհահայոց վրա: Թեև այդ տարածքների լեհահայությունը հովվելու համար 1810 թ. նշանակվեց Յուզեֆ Քոնիտոֆովիչ եպիսկոպոսը (նրա նստավայրը Մոգիլյովն էր, սպասարկում էր Կամենեց-Պոդոլսկի, Լուցկի, Ռաշքովի և Բալտայի հայությունը), բայց դա, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, ձևական էր: Յուզեֆ Քոնիտոֆովիչի մահվանից հետո նոր եպիսկոպոս չընտրվեց: Լեհահայերի պետքերը սկսեց հոգալ լատին եկեղեցին: Դա նշանակում է՝ ռուսական տիրապետության տակ անցած լեհահայերը զրկվեցին իրենց սեփական եկեղեցուց, որը կոչվում էր «Լեհաստանի Հայոց ծխակարգի եկեղեցի» և ենթարկվում էր ոչ թե տեղի լատին արքեպիսկոպոսին, այլ՝ անմիջապես Հռոմի պապին: Ռուսական մասի հայերի շատ արագ ձուլման պատճառը «Հայոց ծխակարգի կաթոլիկ եկեղեցու» բացակայությունն էր: Արդեն XIX դարի վերջին այդ կողմերի լեհահայերի մասին այլևս չի հիշատակվում (նրանք ուծացած էին): Մինչդեռ ավստրիական մասի՝ Գալիցիայի հայերը շատ ավելի մեծ հնարավորություն ունենալով պահպանելու իրենց ինքնությունը, այդպիսի ընդգրկուն, զանգվածային ձուլման չեն-

թարկվեցին, ինչպես ուսական մասի հոդ-
բույժ: Լվովի թեմը, լեհահայ եկեղեցու ար-
քեպիսկոպոսներ Յան Շիմոնովիչի (1798-
1816), Կայեթան Վարգերեսովիչի (1820-
1831), Սամուել Ստեֆանովիչի (1832-1858),
Գեորգի Շիմոնովիչի (1858-1875), Գեորգի
Ռոմաշկանի (1876-1881), Իսահակ Իսակովի-
չի (1882-1901) գլխավորությամբ կարողա-
նում էին պահպանել լեհահայերի ինքնու-
թյունը», գրում է Հեղինակը (էջ 15): Անց-
նելով գաղութի XX դարի պատմության շա-
րադրանքին, Գ. Պելչինսկին մեկ հատված
նվիրում է լեհահայոց եկեղեցու վերջին ար-
քեպիսկոպոս, հայագրի, եվրոպահույսակ
աստվածաբան, եկեղեցական, հասարակա-
կան ու ազգային գործիչ Յուզեֆ Թեոդորո-
վիչին՝ նրա զահակալության տարիները
(1902-1938) անվանելով լեհահայոց պատ-
մության «Յուզեֆ Թեոդորովիչի շրջան»:
«Յուզեֆ Թեոդորովիչի մահվամբ փակվում
է լեհահայերի պատմության մի էական
փուլ», նշում է Հեղինակը և բերում XX դա-
րում Լեհաստանում և Բուկովինայում գոր-
ծող հայկական հիմնարկությունների,
դպրոցների, պարբերականների, մշակութա-
յին ու այլ կազմակերպությունների մասին
տեղեկություններ՝ թուցիկ անդրադառնա-
լով նաև լեհահայ եկեղեցու այդ շրջանի ո-
րոշ հարցերի:

Մենագրության մեջ առանձին բաժին
է հատկացված երկրորդ աշխարհամարտի
շրջանի լեհահայության պատմությանը:
Նշվում է, որ խորհրդային զորքերի ներխու-
ժումից հետո հայերի մշակութային ու բա-
րեգործական պետքերը հոգալու նպատակով
1930 թ. հիմնված և թե՛ հայկական, թե՛ լե-
հական շրջանակներում շատ մեծ հեղինա-
կություն ունեցող «Լեհահայոց թեմական
խորհրդի» գոյությունը դարձավ անհնար:
Անօրինակ հալածանքների, զանգվածային
աքսորի և բռնությունների հետևանքով
փակվեցին նրանց մշակութային, սոցիալա-
կան, բարեգործական մնացած կազմակեր-
պությունները ևս, որոնց մեջ նաև՝ դպրոց-
ները: Խորհրդային իշխանությունները
շատ-շատերին, հատկապես գաղութի երևելի
դեմքերին, քեցին Սիրիբ, իսկ եկեղեցու
գործունեությունը շառավիղները հասցվեցին
նվազագույնի, քանի որ խիստ վերահսկո-
ղություն էր ենթարկվում խորհրդային հա-
տուկ ծառայությունների կողմից: Անդրա-

դառնալով Լվովի գերմանական տիրապե-
տության տարիներին՝ (1941-1944) Հեղինա-
կը նշում է, որ հայերի վիճակը անհամեմատ
բարվոք էր, այնքան բարվոք, որ իրենց
տներում թաքցնում էին գերմանացիներից
հալածվող բազմաթիվ հրեաների: Գերմա-
նացիները 1940 թ. Կարապետ Փանոսյանին
և Սերգեյ Հարությունյանին (նրանք ոչ թե
բնիկ, այլ «եկվոր» հայեր էին) թույլատրել
են Վարչավայում բացել «Թեհրան» կոչվող
գորգերի խանութ: Ավելին, Լվով մտած
«Հայկական լեգեոնի» զինվորները սերտ
կապեր էին հաստատել լվովահայերի հետ:
«Լեգեոնի» զինվորները թեև Հայաստանյա
եկեղեցու հետևորդներ էին, բայց հաճա-
խում էին լեհահայոց եկեղեցիները, որոնք
արդեն ազատորեն գործում էին, իսկ լեհա-
հայ քահանա Կազիմիր Ռոմաշկանը նրանց
խոստովանահայրն էր: Փաստեր կան, որ
Հայաստանը թուրքական հնարավոր ներ-
խուժումից պաշտպանելու նպատակով
ստեղծված «Հայկական լեգեոնին» անդա-
մակցել են նաև լեհահայ երիտասարդներ
(էջ 68-73):

Հաջորդ բաժինը վերնագրված է «Հա-
յերի տեղաբաշխումը ժողովրդական Լեհաս-
տանում»: Թվարկվում են այն հիմնական
բնակավայրերը, որտեղ հայեր են բնակվում
(Կատովիցե, Բիտոմ, Զարժե, Գլիվիցե, Օպո-
լե, Օլավա, Ատշելին, Բժեգ, Վրոցլավ,
Շլեզոնկի (Սիլեզիայի) Օբորնիկի, Վոլով,
Կրակով, Վարչավա, Տրոյմեյսե (Գդանսկ,
Գդինիա, Սոպոտ քաղաքները միասին), ա-
վելի քիչ՝ Պոզնան, Զիելոնի Գուբի, Շչեչին,
Օլշտին, Լյուբլին, Զակոպանե, Լոձ):

Լեհահայոց 1900-1970-ական թթ. հա-
մակողմանի պատմությունը ներկայացնե-
լուց հետո Գ. Պելչինսկին անցնում է գաղ-
թավայրի վերջին քսանամյակի պատմու-
թյանը՝ պնդելով, որ լեհահայերը 1980-ա-
կան թթ. սկսած՝ «վերածնունդ են ապրում»:
Նրա կարծիքով բուն լեհահայերի թիվը ար-
դի Լեհաստանում 10-15 հազար է՝ թեև լե-
հահայոց եկեղեցու պետ Յուզեֆ Կովալչիկի
կարծիքով նրանք մոտ 36 հազար են: Նշում
է, որ 1980 թ. մարտի 24-ին լեհահայերը
Վարչավայում հիմնել են «Հայ մշակույթի
համակիրների միություն»:
Միությունը 1983 թ. սկսած՝ առանձին գրքուկներով ու
գրքերով լույս է բնծայում Լեհաստանի հա-
յոց գաղթավայրերի պատմությանը վերա-

բերող աշխատություններ կամ վերահրատարակում տարբեր ժամանակներում տպագրված նման առավել արժեքավոր ուսումնասիրությունները: Ցայսօր հրատարակվել է 28 անուն գիրք և գրքույկ (ի դեպ՝ գրախոսվող մենագրությունը շարքի 27-րդ հրատարակությունն է): Հեղինակը գրում է, որ 1980-ականներին «Հայ մշակույթի համակիրների միության» ինքնավար գործող մասնաճյուղեր են հիմնվել Կրակովում և Գդանսկում (Գդանսկին կպած Սոպոտ և Գդինիա քաղաքներն էլ Հետր, որոնք բոլորը միասին այժմ լեհերը կոչում են նաև Տրոյսեյսցիե. Հայերեն կարելի է թարգմանել «եռաքաղաք»):

Կազմակերպությունը 1980 և 1983 թթ. կրակովում անցկացրել է գիտական նստաշրջաններ, որոնցում կարդացվել են գաղութի պատմության տարբեր շրջանների վերաբերյալ գեկուցումներ: Նույն քաղաքում կազմակերպվել են Հայերենի ուսուցման դասընթացներ, որը վարում էր Հայագետ, ազգուսուցիչ լեհ Անգեյ Պիսովիչը: 1988 թ. Սպիտակի երկրաշարժից անմիջապես Հետո միության նախաձեռնությամբ գաղութը Հանգանակել և Հայաստան է ուղարկել մոտ ութ միլիոն զլոտի, նաև հագուստ:

1989 թ. լեհահայոց եկեղեցու հովվությունը Գլիվիցեյում կազմակերպել է լեհահայերի սրբություններից մեկի՝ «Լիսիցե-Գլիվիցեյան Աստվածամոր» գափնեգրման (կորոնացիա) արարողություն-հանդիսությունները: Հանդիսություններին մասնակցում էին Լեհաստանի բոլոր Հայաշատ քաղաքներից ու բնակավայրերից, ինչպես նաև Արևմտյան Ուկրաինայից և Ռումինիայից (Բուքովինա) ժամանած Հարյուրավոր լեհահայեր: Արարողություններին մեծ շուք և համալեհաստանյան ընդգրկում ու նշանակություն էր հաղորդում այն փաստը, որ դրանց մասնակցում էին և ելույթ ունեցան այդ օրերին պաշտոնական այցով իր Հայրենիքում գտնվող Հոմմի Հովհաննես Պողոս պապը, Լեհաստանի կաթոլիկ եկեղեցու գլուխ (պրիմաս) Յուզեֆ Գլեմպը, Բեյրութից Լեհաստան ժամանած Հայոց կաթոլիկ եկեղեցու կաթոլիկոս Հովհաննես Պետրոս Գասպարյանը, բազմաթիվ կարդինալներ, եպիսկոպոսներ, այլ եկեղեցականներ:

Նոսելով լեհահայ արդի եկեղեցու գործունեության մասին, Հեղինակը արձանագրում է այդ եկեղեցու իրավադրության (յուրիսդիկցիա) շուրջ լեհահայերի մեջ այսօր առկա տարածայնությունները: Բանն այն է, որ նրանց եկեղեցին այժմ ենթարկվում է Հայ կաթոլիկ եկեղեցու կաթողիկոսությանը, որի կենտրոնը գտնվում է Բեյրութում:

Լեհահայերի մի մասը, մասնավորապես նրանց մեջ իր կենդանության օրոք մեծ Հեղինակություն վայելող Կազիմիր Ֆիլիպյակ քահանան, ջանքեր էր թափում վերականգնելու լեհահայերի եկեղեցու կազմակերպական այն կառույցը, որ քանդվեց ու վերացավ Երկրորդ աշխարհամարտի ընթացքում: Այսինքն՝ Հանգուցյալ քահանան ձգտում էր վերականգնել «Լեհաստանի Հայոց ծիսակարգի եկեղեցին»՝ իր արքեպիսկոպոսությունում, որը 1670-ական թթ. (իրավաբանորեն 1691 թ.) մինչև 1938 թ., ենթարկվում էր անմիջապես Հոմմին, այսինքն՝ կաթոլիկ տիեզերական եկեղեցու համակարգում ունենր նույն իրավադրությունը, ինչ որ լեհական, ուկրաինական կամ լիտվական կաթոլիկ եկեղեցիները: Սակայն լեհահայոց եկեղեցու ներկայիս պետ Հայագետ Յուզեֆ Կովալչիկը հակված է լեհահայերին պահել Հայոց կաթոլիկ եկեղեցու իրավասության տակ, ինչը Հանգուցյալ քահանա Կազիմիր Ֆիլիպյակի Հետևորդների սրտովը չէ: Նրանք ամեն կերպ ուզում են վերականգնել «Լեհաստանի Հայոց ծիսակարգի եկեղեցին»՝ իր կազմակերպական կառույցով ու իրավադրությամբ:

Աշխատության Հեղինակը գրքի մյուս բաժիններում բարեխղճորեն ներկայացնում է լեհահայերի ուրիշ կազմակերպություններ և՛ իրենց հիմնադիրների ու նախադահների, կազմակերպությունների անդամների թվի, ծավալած գործունեության և այլ կարևոր փաստերի մատնանշումով: Այդ կազմակերպություններից կարևորագույնը 1990 թ. կրակովում հիմնված «Հայ մշակույթի ընկերությունն» է, որը Լեհաստանի մշակույթի նախարարության Հովանավորությամբ ու ծախսերով 1993 թ. լույս է ընծայում «Տեղեկագիր» անունով մի Հանդես (Biuletyn Ormiańskiego Towarzystwa kulturalnego):

Ընկերությունը 1991, 1992 և 1994 թթ. կազմակերպել է «Լեհահայերի համալեհաստանյան հանդիպում» հավաքները, ուր կարդացվել են նաև զեկուցումներ: Կազմակերպությունն այժմ ջանքեր է գործադրում հիմնելու «Լեհահայոց թանգարան»:

1993 թ. Գլխիցն քաղաքի իշխանությունները քաղաքի կենտրոնում լեհահայոց եկեղեցու հովվապետությունը տրամադրել են բավական ընդարձակ մի տարածք, ուր սկսվել է «Հայկական ակումբի», թանգարանի, գրադարանի և բավական չքեղ եկեղեցու շինարարությունը: Յուզեֆ Կովալչիկի նախաձեռնությամբ հիմնվել է ավետարանական «Մասիս» միությունը:

Գլխիցն քաղաքում, որն այսօր լեհահայոց եկեղեցու կենտրոնն է, 1994 թ. լույս է տեսնում «Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատվիրակ» (Poslaniec swietego Grzegorza Oswiecicela) հանդեսը, որը 1927–1938 թթ. հրատարակում էր Լվովի հայոց թեմական խորհուրդը:

Մենագրությունում տեղեկություններ կան նաև Հայաստանից ու այլ վայրերից վերջին տարիներս Լեհաստան դաղթած Հայերի վերաբերյալ, տրվում են նրանց տեղաբաշխման, զբաղմունքի, հիմնված կազմակերպությունների մասին տվյալներ: Օրինակ՝ նշվում է, որ նրանք Վարչավայում հիմնել են «Հույս» Հայերեն պարբերականը, «Արցախ» երաժշտախումբը, «Հայկական խոհանոց» սրճարանը, իսկ 1994 թ. պետական հովանավորությամբ գործում է մոտ հարյուր աշակերտ ունեցող Հայկական դպրոց:

Աշխատության մեջ բաժիններ են հատկացված լեհ-Հայկական մշակութային ու էթնիկ խաչասերման, ազգային մյուս փոքրամասնությունների դաշտում Հայերի

տեսակարար կշռի, ուրիշ փոքրամասնությունների համեմատ լեհահայերի ուժացման ընդգրկումների և այլ խնդիրների մասին: Մենագրության մի հատվածը նվիրված է Հայաստանում և աշխարհի մյուս երկրներում բնակվող հայերի քանակին:

Հեղինակը, հիմնվելով օտարալեզու Հայ պարբերական մամուլի և գիտական հրատարակությունների ու աշխատությունների ընձեռած տվյալների վրա, բերում է Հայերի թիվը ամբողջ աշխարհում ըստ առանձին գաղթավայրերի:

Աշխատությունը, իհարկե, զերծ չէ բացթողումներից, փաստական որոշ սխալներից, նկարագրվող իրադարձությունների երբեմն անհատական, ուստի վիճելի մեկնաբանություններից ու հետևություններից: Հայերենի չիմացություն պատճառով հեղինակը չի կարողացել օգտվել դիտարկվող շրջանի լեհահայոց պատմությանը վերաբերող հայալեզու թեև քիչ, բայց բավական կարևոր աշխատություններից: Սակայն դա չի նսեմացնում աշխատության արժեքը, քանի որ այն անտարակույս լուրջ հիմք է XX դ. լեհահայոց պատմության ավելի հանդամանալի ու հիմնավոր ուսումնասիրությունների համար:

Գիտական մեծ բարեխղճությամբ, հմտությամբ ու սիրով շարադրված լեհ գիտնականի գրախոսվող աշխատությունը արժեքավոր ներդրում է լեհահայոց մոտ 800-ամյա գաղութի XX դարի պատմության շատ քիչ ուսումնասիրված բնագավառում և փաստորեն XX հարյուրամյակի Լեհաստանի Հայոց գաղութի պատմությանը նվիրված անդրանիկ մենագրությունն է:

Ռ. Հ. ՀԱՄԲԱԲՁՈՒՄԹԱՆ